

ՀԱՅ ՎԱՆԱԿԱՆՆԵՐԸ ԵՎ ՌԻՒՏԱՎՈՐՆԵՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ X ԴԱՐԻ ՎԵՐՋՈՒՄ—XI ԴԱՐԻ ՍԿՋՐՈՒՄ¹

Ժեռար ԴեԴեՅԱՆ (Մոնպելյե)

Արշակունյաց հայկական թագավորությունը, որ քրիստոնեություն ընդունեց, ըստ ավանդության, 301 թ., փաստորեն դարձավ աշխարհում առաջին քրիստոնեական պետությունը 313 թ. Վուստանյին Մեծի կողմից հռչակված Միլանի հրովարտակը սոսկ հանդուրժողական բնույթ էր կրում: Այս դավանափոխությունը հայ քրիստոնեից աշխարհը կասեց Արևմուտքի հետ: Ըստ վարքագրական ավանդության Հայաստանից են եկել III դարում՝ սուրբ Քրիստլեոսը՝ Կոմիենի (ժամանակակից Բելգիայում) հովանավոր սուրբը², սուրբ Մինիատոն (Մինասը)³, Ֆլորենցիայի հովանավորը⁴, IV դարում՝ սուրբ Գրեգուար զր Տալլարը (Պրովանս)⁴, Տոնգրում մեծարվող սուրբ Սերապիոսը, V դարում՝ սուրբ Լիբերոսը, մի ճգնավոր, որ մեծարվում է որպես Անկոնի հովանավոր, ուր, Սան-Չիրիակո եկեղեցում, պահվում են նրա մասունքները⁵: Միլանի սուրբ Անգասը ևս հայ է համարվում:

476 թ. Հռոմեական կայսրության անկման հետևանքով առաջացած թագավորություններում բազմաթիվ չույններից բացի կարելի էր հանդիպել այլ արևելյան քրիստոնյաների ևս, որոնք զբաղվում էին միջազգային առևտրով և հայտնի էին «Syrus» անորոշ հորջորջմամբ: Հենց Դալլիայում կային եպիսկոպոսներ, որ ասորախոս էին և հետևում էին ասորական ծիսակարգին: Այս արևելյան քրիստոնյաների թվին կարելի է դասել մի շարք հայերի. Գրեգուար զր Տուր եպիսկոպոսը (Iiistoria Francorum-ի հեղինակը) մեզ հայտնում է, որ 591 թ. իր թեմում ապաստանել է Սիմոն եպիսկոպոսը՝ պարսկա-հայկական պատերազմների զոհերից մեկը⁶: VII դարում հայ կրոնավորներ են մեկնել Իռլանդիա (ուր բարբարոսներին չէր հաջողվել ոչնչացնել ռոմեական մշակույթը) և հիմնել Սելլ-Աշիդի նշանավոր վանքը⁷:

649 թ. Իտալիայում կայացած Լատրանի եկեղեցական ժողովի արձանագրությունները մեզ են ավանդել Հռոմում գտնվող մի հայկական վանքի անունը՝ «Renati», որ նվիրված է եղել ս. Կուլսին և ս. Անդրեասին: Այս վանքի վանահայր Թալաստիոսը, ի թիվս այլ արևելյան հոգևոր առաջնորդների, որոնց նստավայրը Հռոմն էր, մասնակցել է նույն այդ Լատրանի եկեղեցական ժողովին: Թե՛ մեկը, թե՛ մյուսները որպես Արևելյան եկեղեցու ներկայացուցիչներ եղել են յո-

¹ Ես պետք է իմ խորին շնորհակալությունը հայտնեմ բարեկամիս՝ Պիեռ-Անդրե Սիգալին, Նակարիոս Անտիոքացու զոյություն մասին ինձ տեղեկացնելու և Արևմուտքի վերաբերյալ գրականության հարուստ ցանկով ապահովելու համար: Երախտապարտ եմ նաև Պ. Լյուսին Մյուսսեին՝ հայ-սկսնդիկական կապերին վերաբերող հանգամանալից տեղեկությունների համար:

² Bernard Delmaire. Le culte de Saint Chrysostome à Lens (Pas-de-Calais) du XVe au XVIIIe siècle.—Mémoires de la Société d'Histoire de Comines et de la région. T. V, fasc. 2, 1975, pp. 251—272.

³ P. Minas Nourikhan. L'abbé Mèkhitar de Sébaste. Venise, 1922, pp. 174—175; L. Zekiyan. Le colonie armene del Medio Evo in Italia e le relazioni culturali italo-armene. Venezia, 1978 (estratto dagli „Atti del Primo Simposio Internazionale di Arte Armena“, 1975), p. 840; Histoire des Arméniens (ouvrage collectif). Toulouse, 1982, p. 392.

⁴ Zekiyan. Op. cit., p. 847.

⁵ Նույն տեղում:

⁶ Histoire des Francs. Livre X, ch. 24; հղումը տե՛ս Frédéric Macler. La France et l'Arménie à travers l'Art et l'Histoire. Paris, 1917, p. 10.

⁷ Francoise Henry. La Sculpture irlandaise. Paris, 1933, p. 173.

ղովի որոշումների տակ ստորագրողների թվում⁸։ VIII դարի սկզբին Լեոն Խսավրացին՝ առաջին պատկերամարտ կայսրը, Տաթևի հայկական վանքի առաջնորդին ուղարկում է Հռոմ՝ դավանաբանական վեճերին նվիրված գրքեր բերելու⁹։ Այս նույն ժամանակաշրջանում է, որ Հռոմ եւ տեղափոխվում ու Ս. Ապոլիններ եկեղեցում ամփոփվում եվստրաթիոս հաճատակի ու նրա հետևորդների մասունքները in archipres by teratin¹⁰ և Խտալիայում, ինչպես և ամբողջ Արևմուտքում, նշանակալիորեն տարածվում է ս. Վլաս Սեբաստացու պաշտամունքը¹¹։

Արևմտյան տեքստերում Հայաստանը վերստին սկսում է հիշատակվել միայն IX դարի վերջին, երբ երկու և կես դար տեւած արաբական գերիշխանությունից հետո երկրի հյուսիսում ստեղծվում է Բագրատունյաց հայկական թագավորությունը, իսկ X դարում՝ Արծրունյաց թագավորությունը հարավում։

Վանական Գր. Սեն-Գալը (Գերմանիայում), որը գրել է մոտավորապես 858 թ., նշում է, որ հայեր կային Հաղուն ալ-Բաշիոի կողմից արևմուտքի կայսեր՝ Կարլոս Մեծի մոտ ուղարկված պատվիրակության մեջ։ Այս դիտողությունը հավանաբար պետք է վերագրել Արևմուտքի ցուցաբերած ուղղորդությանը ոչ այնքան ղեկավար պատմական իրողությունը, որքան ղեկավարածնվող Հայաստանը¹²։ Հիշեցնենք, որ նեապոլի հռչակավոր՝ բարի վրա փորագրված տոնացուցում, որ թվագրվում է IX դարով, հիշատակվում են հայ եկեղեցու ամենանշանավոր սրբերին՝ ս. Գրիգոր Լուսավորչին, ս. Հովսիսիմենին և ս. Գայանեին նվիրված տոները։ Կարելի է ենթադրել, որ այս փաստը վկայում է հայկական համայնքների գոյության մասին¹³։

Բագրատունյաց աղղեցիկ թագավորությունը (886—1045) ուղղափառ բաժնեկիսների կայսրության կրոնական և բաղադրական թելադրանքով հաղթականորեն ապահովում է բրիտանական սահմանների պաշտպանությունը և նույնիսկ X դարի վերջին և XI դարի սկզբին մասնակցում բյուզանդական վերանվաճումներին Կիլիկիայում, Սիրիայում և Միջագետքում¹⁴։ Բյուզանդական կայսրության և մուսուլմանական աշխարհի միջև գտնվող Բագրատունյաց թագավորությունը առևտրական տեսակետից առաջնակարգ դեր է խաղում¹⁵։ Նրա մշակույթը ծաղկում է ապրում քաղաքամայր Անիում, որն իր պատկառազգու պարիսպների ներսում պարփակում իր «հագար ու մեկ եկեղեցի»։ Հայ ճարտարապետները կառուցումներ են կատարում Բյուզանդիայում (Տոգատը՝ անեցի մի նարտարապետ, վերականգնում է Ս. Սոֆիայի տաճարի գմբեթը), բյուզանդական զորամասերում կային հայ ռազմիկներ, լինելի դրանք զաշնակից զորքեր թե ստրատիոնների («ղինվորականների») զորագնդեր, իսկ շատ կայսրեր ունեին հավական ծաղում, քանի որ Մակեդոնյան դինաստիան (867—1057) իրականում սերում էր Մակեդոնիայում հաստատված հայկական զաղութի ղինվորականներից¹⁶։

Հայաստանի (լինի դա Բագրատունյաց թագավորությունը թե Բյուզանդական կայսրության հայկական զավաճները) սղղեցության ոլորտի ընդարձակմանը նպաստում է արտագաղթը դե-

⁸ Zekiyan. Op. cit., p. 333; Histoire des Arméniens, p. 391.

⁹ Պատմություն նահանգին Սիսական, առաքել Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Միսնաց, հրատ. Շահնազարեանցի, հ. I, Փարիզ, 1859, էջ 179—189, trad. M. Brosset, Saint Petersburg, 1861, pp. 81—82; Հղում տե՛ս N. et M. Thierry. Peintures murales de caractère occidental en Arménie, Eglise Saint-Pierre et Saint-Paul de Tathév (début du Xe siècle).—Byzantion. T. 38, 1963, fasc. I, p. 186.

¹⁰ Zekiyan. Op. cit., p. 841; Histoire des Arméniens, p. 391.

¹¹ Zekiyan, p. 841; Histoire des Arméniens, p. 392.

¹² Monumenta Germaniae Scriptores. T. II, p. 752; Հղում տե՛ս MacIer. La France et l'Arménie, p. 10.

¹³ Ն. Ակիւնյան. Ս. Գրիգոր Լուսավորչի տոները նեապոլիսի մարմարյա տոնացուցի վրա.—Մատենագրական հետազոտություններ. հ. Ե, Վիեննա, 1953, էջ 21—45։

¹⁴ Հայ ժողովրդի պատմություն. հ. III, Երևան, 1976, էջ 673—677; Histoire des Arméniens, p. 283—284.

¹⁵ Հմմտ. Hagop Manandian. The Trade and Cities of Armenia in Relation to Ancient World Trade (Թարգմանությունը կատարել է Նինա Գարսոյանը ռուսերեն երկրորդ հրատարակությունից). Lisbon, 1965; Հայ ժողովրդի պատմություն. հ. III, էջ 214—222.

¹⁶ Peter Charanis. The Armenians in the Byzantine Empire. Lisbon, 1963, p. 34—35; Histoire des Arméniens, p. 287—294.

պի Բյուզանդիա՝ Ասորիքից Բալկաններով մինչև Հարավային Իտալիա¹⁷, ինչպես նաև ղեպի լատինական Արևմուտք:

1. Հայերը Իտալիայի թագավորությունում

Մենք գիտենք Տգնավոր ս. Սիմեոն ղե Պոլիորոնեի մասին (ծնվել է X դարի երկրորդ կեսին, մահացել է 1016 թ. հուլիսի 26-ին)¹⁸: Պոլիորոնեի՝ Պո գետի աջ ափին, Մանտուայի հարավում գտնվող Բենեդիկտյան վանքի¹⁹ վանականներից մեկը, որը եղել է գրեթե Սիմեոնի ժամանակակիցը, վերջինիս նվիրել է մի շատ հանգամանակից Vita (վարքագրություն)²⁰: Արևելքում Սիմեոնի ապուստոլականության վերաբերյալ տեղեկությունները նա քաղում է մի նամակից, որը հավանաբար նրան էր ուղարկել Երուսաղեմի պատրիարքը: Սիմեոնի կյանքն Արևմուտքում նա ներկայացնում է ըստ իր, ինչպես նաև ականատեսների հիշողությունների և մի քանի վավերագրերի²¹: Թեև, դարաշրջանի կրոնական ընկալումներին համապատասխան, հրաշագործություններին մեծ տեղ է տրված, սակայն պատմական և աշխարհագրական միջավայրը ներկայացված է մեծ ճշգրտությամբ, հատկապես Արևմուտքին վերաբերող մասում:

Սիմեոնը ծնվել է Հայաստանում: Նրա հայրը, որ աղնավական էր, եղել է «գորապետ» (MAGISTER MILITIAE): Անգրում նա դառնում է վասիլյան վանական, այնուհետև իր եղբայր Ստեփանի հետ քաշվում է «անապատ»: Ապա որպես ուխտավոր հայտնվում է Դուստոնում, հետո մեկնում Իտալիա՝ Հռոմ. ինչ-որ եկեղեցական ժողովի կապակցությամբ Բենեդիկտոս Յոթերորդի դպիրներից մեկը նրան մեղադրում է հերետիկոսության մեջ, նա հերքում է այդ մեղադրանքը մի հայ եպիսկոպոսի օգնությամբ: Խուսափելով իր նոր տարածվող փառքից, նա անցնում է Տոսկանայով, ուր «ուղղափոխում է» իր հետ վատ վարվող ինչ-որ վանականների, ապա անցնելով Պիզայով և Լուկայով, նորից վերադառնում ղեպի հյուսիս և Լոմբարդիայի, անշուշտ Բուրգունդիայի, Ակվիտանիայի և Գասկոնիայի վրայով (ժամանակակից Ֆրանսիայում) հասնում Սանտիագո ղե Կոմպոստելա (Իսպանիայում), որտեղից էլ մեկնում է Անգլիա: Դեպի Իտալիա կատարած մի քանի նոր ուղևորություններից հետո նա ի վերջո հասնում է Պոլիորոնեի վանքում, ուր վայելում է մարկիզ Բոնիֆաչոյի հովանավորությունը և Իտալիայի բոլոր իշխանների բարեհաճությունը:

Այս պատմությունն ընդհանուր առմամբ հավաստի է: Սիմեոնի հոր տիտղոսը հիշեցնում է Բյուզանդիայի ռազմական պաշտոնները: Այն փաստը, որ նա ինքը դարձել է վասիլյան վանական, դարձանալի չէ. նա ծնվել էր մի դարաշրջանում, երբ Հայաստանն ապրում էր արտասովոր վանական «նորացում», որ հաճախ ներընչված էր Ս. Վասիլի ուխտի օրինակով, ինչպես այդ տեղի ուներ Հաղուստում, Սանահնում կամ Կամրջաձորում՝ Արարատյան գավառի նըշանավոր վանքում²², ուր և, թերևս, մենակեցության էր տրվել Սիմեոնը²³: Ճգնակեցությունը ևս մեծ տարածում է գտնում Հայաստանում, ինչպես վկայում է Ասողիկը՝ այդ կրոնական ջերմեհաղորդության ականատես վկան²⁴: Գրիգոր Նարեկացին (951—1003), որն անհաղորդ չէր համաշխարհային եկեղեցու հոսանքներին և, մասնավորապես, քաղկեդոնական վարդապետու-

¹⁷ Այս դարաշրջանում հայերի արտագաղթի մասին տե՛ս Արշակ Ալպոյաճյան, Պատմություն հայ գաղթականության (այսուհետև՝ Ալպոյաճյան, Գաղթական), Կահիրե, Է. Ա. և Բ., 1941 և Ս. Գ. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության. հ. 1, 2, Երևան, 1964—1967:

¹⁸ Filippo Carrafa. Simeone, eremita di Polirone.—In: Bibliotheca Sanctorum. Roma. 1961—1970, t. XI, col. 114—115.

¹⁹ San Benedetto di Polirone վանքի մասին տե՛ս Guida d'Italia del Touring Club Italiano, Lombardia. Milan, 1970, p. 568.

²⁰ Acta Sanctorum (այսուհետև՝ AASS), հուլիս, VI, էջ 324—337.

²¹ AASS, „Commentarius historicus“, p. 323.

²² Այս «նորացման» մասին տե՛ս Ստեփաննոսի Տարոնեցու Ստողկան Պատմություն տիեզերական, հրատ. Ստ. Մախասյանցի. Պետերբուրգ, 1885, էջ 171—180:

²³ Մ. Չամչևան. Պատմություն Հայոց. հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 861:

²⁴ Ասողիկ, էջ 171—180: Ստողիկն իր Պատմության մեջ ներմուծում է որոշ հրաշագործությունների նկարագրություններ՝ այստեղ կարելի է հանդիպել մենակացների, որոնք չիրկվում են առյուծի ճանկերից և կամ վիշապի երախից:

Բյանը, X դարի երկրորդ կեսին բնորոշ՝ դեպի ասկետիկ կյանքը և աղոթքը ձգտման կատարյալ մարմնացումն է²⁵։

Թողնելով իր վանքը, Սիմեոնը դնում է «անապատ», ուր զբաղվում է հայ եկեղեցու կողմից սահմանված բաղադրիկ խիստ ծավալահույս Սյունուհետև նա որպես ուխտավոր գնում է Իրուսաղեմ՝ Փրկչի գերեզմանին այցելության։ Երաշխավորական նամակը վերցնում է հավանաբար ոչ թե Երուսաղեմի հույն պատրիարքից, այլ, անկասկած, հայ արքեպիսկոպոսից²⁶։ 983 թ. նա գալիս է Հռոմ. ուս է այն միակ հավանական տարեթիվը, երբ Բենեդիկտոս Յոթերորդ պապը կարող էր սինոդ գումարած չինել²⁷։ Այստեղ երևան է գալիս ևս մի «ուխտավոր»՝ մի հայ եպիսկոպոս, որ լավ համարում ուներ պապական ատյանում, որը և նրան արդարացնում է հերետիկոսության մեղադրանքներից²⁸։ Սիմեոնը հավատաբնության է ենթարկվում ոչ այնքան բուն հայկական եկեղեցու վարդապետության, որքան, անկասկած, Հայաստանում թողնող րակեցիների աղաղի²⁹ հարաճուն ծավալման պատճառով³⁰։ Բենեդիկտոս Յոթերորդի գումարած եկեղեցական ժողովի նպատակն էր եկեղեցական բարենորոգումներ կատարելը, որի առաջին կողմնակիցն ինքն էր։ Հնարավոր է, որ Արևմուտքում Սիմեոնը տարվել էր բարենորոգման գաղափարով, որը զորեղ էր ոչ միայն Ֆրանսիայում, այլև Իտալիայում, որն այդ շրջանում գտնվում էր Օստոնյան հարստության կայսրերի իշխանության ներքո³¹։ Փաստորեն նա «հեղափոխում է» տոսկանյան վանականներին, որոնք մինչ այդ ամենայն հոգածությամբ հարգելով «Երրորդան կանոնադրության սկզբունքները»³², նրա հետ վատ էին վարվում որպես «reformati»-ի։ Իր կյանքի ավարտը նա անց է կացնում Սան Բենեդեկտոյի Պոլիտենե վանքում։ 1054 թ. Առաջին խնդրող պապը օծել է տալիս և. Սիմեոնի պատվին Պոլիտենեում կառուցված եկեղեցին, դրանով իսկ հաստատելով, որ նրա կյանքը նվիրված է եղել և. Բենեդիկտոսին³³։ Ս. Սիմեոնի դեպի Արևմուտք կատարած հեռավոր ուղևորությունները սովորական բան են նշված ժամանակաշրջանի համար. Հռոմ գալիս էին հարգանքի տուրք մատուցելու և. Պետրոսի և ս. Պողոսի գերեզմաններին³⁴։ Նրա ժամանումը Սանտիսիմո դե Կոմպոստելա 933 կամ 934 թ.³⁵ ժրանգամայն համապատասխանում է այն ժամանակաշրջանին, երբ այդ ուխտատեղին

²⁵ Grégoire de Narek. Le Livre de Prières, préface par J. Mécérian, introduction et notes par I. Kéchichian. Paris, 1961, pp. 17—25 et pp. 31—35. Հրատարակության է պատրաստվում Ժան-Պիեռ Մահեի կատարած նոր ֆրանսերեն թարգմանությունը։

²⁶ Նա Երուսաղեմ է գնացել 983 թ. առաջ, իսկ մեզ հայտնի են միայն մի Թովմա Երկրորդ և մի Հովսեփ Երկրորդ (V. Grumel. La Chronologie.—In: Traité d'études byzantines, sous la direction de Paul Lemerle. Paris, 1958, p. 452).

²⁷ AASS, „Commentarius historicus“ p. 321.

²⁸ Ibidem, Vita, p. 326.

²⁹ Վերջինս, պավլիկյաններից ընդունելով էստաֆետը, վերելք է ապրում հատկապես X դարի վերջին։ Aristakès de Lasdivert. Récit des malheurs de la nation arménienne, trad. française d'après l'édition et la traduction russe de Karen Yuzbashian. Bruxelles, 1973, pp. XXXIV—XXXVI.

³⁰ Սուր հարյուր տարի անց Գրիգոր Յոթերորդը նման հարցաբնության է ենթարկում հայ հերետիկոս Մակարիոսին։ Հմտ. Codificazione canonica orientali fonti, Série III, vol. I. Acta Romanorum Pontificum a. S. Clemente (an—c—90) ad Coelestinum 111—1198. t. I, Vatican, 1943, № 379.

³¹ A. Fliche et V. Martin. Histoire de l'Église, t. 7. L'Église au pouvoir des laïques (888—1057), pp. 61—62.

³² AASS, „Vita“, p. 328.

³³ Migne. P. L., 143. col. 739.

³⁴ Այս այցելությունը կոչվում էր «ad limina» (բառացիորեն՝ «շեմին») և իր նախնական իմաստը կորցրել էր միաժամանակ նաև պապին այցելելու այն սովորության պատճառով, որ սրմատավորվել էր Գրիգորյան ռեֆորմի ժամանակից ի վեր։ E. R. Labande «Ad limina» : le pèlerin médiéval au terme de sa démarche.—In: Mélanges René Crozet. CESM. Poitiers, 1966, pp. 289—290.

³⁵ J. M. Lacarra, L. Vasquez de Parga, J. Uria. Las Peregrinaciones a Santiago de Compostela, 3 vol. Madrid, 1948—1949. T. I, pp. 45—46.

բաց էր ուխտավորների համար՝ 950-ից մինչև 997 թ. (որից հետո մուսուլմանական արշավանքները կարճ ժամանակով ընդհատեցին ուխտագնացությունը)³⁶, հաշվադրաց արշավանքների շրջանում հայ ուխտավորներին հատկացված էր հատուկ հովետուն (հյուրատուն)³⁷։ Սիմեոնի մեկնումը Անգլիա կարելի է բացատրել ռեֆորմիստական հոսանքի ներթափանցումով այն երկիրը էղգար թագավորի սրբոք (959—975), որին շրջապատող հոգևորականությունը կապի մեջ էր գտնվում Ֆլորի-սյուր-Լուարի և Քլյունիի աբբայությունների հետ։ 969 թ. Ռեմ-դիում նույնիսկ մի օրինակելի բենեդիկտյան աբբայություն է հիմնվում³⁸։ Անտարակույս հենց այս աբբայությունում է, որ X դարի վերջին իր վախճանն է գտնում ոմն «lvo, episcopus de Persia»-ը, հավանաբար որեւէ նեստորական եպիսկոպոս Խորասանից³⁹։ Ս. Մարտինի գերեզմանը Տուրում (ժամանակի ամենանշանավոր ուխտատեղին Գալլիայում), ուր այնուհետև աղոթելու է դալիս Սիմեոնը, միջազգային հեղինակությունից բացի վայելում էր նաև կալնությունների հարստության առաջին թագավորների հովանավորությունը, որոնք հանդիսանում էին վանքի վանահայրերը։ Դեպի Իտալիա կատարած մի քանի նոր հեռավոր ուղևորություններից հետո Սիմեոնը քաղվում է Պոլիոնեն՝ 1007 թ. Կանոսսայի մարկիզ Տելադոյի կողմից հիմնված վանքը⁴⁰, անցնելով վերջինիս ողորմ՝ Տոսկանայի դուքս և մարկիզ Բոնիֆաշոյի (1012—1032)՝ իտալանավորության տակ⁴¹, և բարձր գիրք գրավում Իտալիայի թագավորությունում⁴², նույն Բոնիֆաշոն զիմում է Բենեդիկտոս Յոթերորդ պապին (1017—1024)՝ 1016 թ. մահացած Սիմեոնի սրբաճշեկու խնդրանքով և ստանում դրական պատասխան⁴³։ Vita-ի հեղինակի ցուցաբերած միամիտ ուղադրությունը Սիմեոնի սքանչելագործական ընդունակությունների նրկատմամբ լպպետ է ստվեր գցի վերջինիս՝ Արևելքում անցկացրած տարիների, Արևմուտքում կատարած ուղևորությունների և Իտալիայի թագավորության կրոնական կյանքին ցուցաբերած մասնակցության հավանականության վրա։

Նույն այս Բոնիֆաշոյի մարկիզության օրոք Լուկկա է գալիս մեկ այլ հայ՝ Դավենը (ծնվել է X դարի վերջին կամ XI դարի սկզբին, մահացել է 1050 թ. հունիսի 3-ին)⁴⁴։ Նրան նվիրված Vita-ն շատ համառոտ է⁴⁵ և բավական անորոշ նույնիսկ այն հարցերում, որոնք վերաբերում են Արևմուտքում նրա անցկացրած տարիներին։ Երկը գրվել է XI դարի երկրորդ կեսին, հեղինակը մի լուկկացի կանոնիկոս է։ Վաղբազիրը բավական ժամանակ անց ի մի է բերել «հրաշքով ապաքինվածներից» մի քանիսի վկայությունները⁴⁶, որոնց հետ կատարված «սքանչելագործությունները», ի դեպ, նրան հետաքրքրում են շատ ավելի, քան ս. Դավենի կյանքն ինքնին։ Մենք տեղեկանում ենք, որ Դավենը (թերևս Դավիթ անվան փաղաքշական ձևերից մեկն է իտալերենում) ծնվել է Հայաստանում, ազնվականի ընտանիքում։ Վաճառելով իր ողջ ունեյվածքը, նա մեկնում է «peregre» («ուխտի») և այցելում Երուսաղեմի ու Հռոմի սրբավայրերը։ Ստադրված լինելով գնալ Իսպանիա՝ Կոմպոստելա, նա կարճ ժամանակով կանգ է առնում Լուկկայում (Տոսկանա)։ այստեղ նրան հյուրընկալում է ազնվաբարո Աթան՝ Սան Միքելի ին Ֆորո ծխական համայնքից, որի հիացմունքին է արժանանում իր ժողովալությամբ և մարգարեություններով։ Զանապարհին կրած դժվարությունների հետևանքով Դավենը մահանում է, դառնալով համընդհանուր մեծարանքի առարկա «հրաշք-ապաքինման» այն մի շարք դեպքերից հետո, որ տեղի են ունենում նրա գերեզմանի վրա։ Լուկկայի եպիսկոպոսը՝ ապագա Ալեքսանդր Երկրորդ պապը, որ Դավենի աճյունի սրբաճման առաջին նախաձեռնողն է, ամփոփել է տալիս նրա մարմինը Սան Միքելի եկեղեցու ներսում⁴⁷։

³⁶ Pierre-André Sigal. Les Marcheurs de Dieu. Paris, 1974, p. 115.

³⁷ Lacarra. Peregrinaciones. T. II, p. 381.

³⁸ Fliche et Martin. Église, 7, pp. 412—413.

³⁹ Guillaume de Malmesbury. Gesta Pontificum, pp. 319—320 (տեղը մեզ ցույց է տվել Լ. Մյունսեն)։

⁴⁰ Guida d'Italia. Lombardia, p. 568.

⁴¹ Dizionario enciclopedico italiano. T. II, p. 336.

⁴² AASS, Vita, p. 332.

⁴³ Migne. P. L., 136, col. 1633.

⁴⁴ Pietro Lazzarini. Davino.—In: Bibliotheca Sanctorum. T. IV, col. 250.

⁴⁵ AASS, հոսնիս, I, էջ 329—331։

⁴⁶ AASS, p. 331.

⁴⁷ Guida d'Italia. Toscana (non compresa Firenze). Milano, 1959, pp. 266—267.

Տեղեկությունների սակավությունը պայմանավորված է, թերևս, նրանով, որ Դավենը լուկկայում մնացել է հաղիվ հյուսիս, ինչպես նաև որոշ լեզվական դժվարություններով, եթե նա էլ, Սիմեոնի նման, արտահայտվել է միայն «lingua armeniacae» (Vita-ում օգտագործված է այս արտահայտությունը)։ Նա ոչ մի պատճառ չունի լուկկայում կաճող առևտուր, քանի որ նաև Միքելե ին Ֆորո եկեղեցին չունի քիչ թե շատ նշանակալից նշխարներ, եթե, իհարկե, աշվի շատենք այն, որ եկեղեցին ուներ լավ հոգետուն (հյուրատուն)։

Դավենի գոյությունն ապացուցող փաստեր կարելի է համարել Ալեքսանդր Երկրորդ պապի (1061—1073) ցուցաբերած ուղադրությունը նրա նկատմամբ, ինչպես նաև նրա սրբացումը Ալեքսանդր Երրորդի օրոք (1159—1181)⁴⁸, Հետագայում նրա զերեզմանն այցելել են բազմաթիվ հայ ուխտավորներ, մասնավորապես Հովհաննես Եսկիսկոպոսը, որը XVI դարում հաստատել է Դավենի հայկական ծագում ունենալը⁴⁹։

Նախքան Հռոմով և Տոսկանայի մարկիզության միջով անցնելը ս. Սիմեոնը և ս. Դավենը կարողացել են անցնել բյուզանդական Իտալիայով, որը հայ ուխտագնացների համար չափազանց հարմար միջանկյալ կայան էր։ «Մակեդոնյան» կայսրերն այստեղ անց էին կացրել ռազմական զաղութացման քաղաքականություն, մասամբ հենվելով հայերի վրա։ 885 թ. հակաարաբական արշավանքի կապակցությամբ Վասիլ II առաջինը զորավարները՝ Ստեփանոս Մաքսենտիոսը և Նիկեիոս փոկաս Նախկինը Ապուլիայում որպես ստրատիգոսներ հաստատել էին իրենց հայ օգնականներին⁵⁰, Հայկական զաղութի այս բնակիչների սերունդներն առնչվել են բենեդիկտյան վանականության հետ. հարկերից ազատ լինելու մասին X դարում վերջինիս շնորհված արտոնազորում ստրատիգոսը հիշատակում են հույն, լոմբարդացի և հայ սպաներին՝ որպես Ապուլիայում գտնվող Մոնտե-Կասսինոյի արքայության տիրույթների հնարավոր հափշտակիչներին⁵¹։

Նշենք, որ IX—X դդ. հայկական եկեղեցիներ են եղել այդ ժամանակ բյուզանդական զերիշխանության տակ գտնվող Ապուլիայում (Իտալիայի հարավ-արևելքում)՝ Մատերայում, Տաոենտոյում, Բարիում։ Նարոք՝ Տերրա դ'Օտրանտո (Ապուլիայի հարավում) է տեղափոխվել ս. Գրիգոր լուսավորչի նշխարների մի մասը, որով և վերջինս պաշտոնապես ճանաչվել է որպես վերոհիշյալ քաղաքի հովանավոր սուրբ։ Այն փաստը, որ Հռոմով անցել կամ Հռոմում գտնվել են հայ վանականներ, անշուշտ վկայում է XI դարում Հռոմի շրջանում հայկական եկեղեցու գոյության մասին⁵²։

Բյուզանդական Իտալիայի հետ հազորդակցվելու հնարավորություն էր ընձեռում նաև ուխտագնացությունը, օրինակ՝ ղեպի Սան Միքելե դե Մոնտե Գարգանո։ Սակայն հայ ուխտավորների մասին հիշատակություններ հանդիպում են միայն XI դարի վերջին. դրանք վերաբերում են Բաբին, ուր նոր էին տեղափոխվել Ծրանիի ս. Նիկողայոսի նշխարները⁵³։

Վերջապես, իտալա-հայկական այս առնչությունների առթիվ անհրաժեշտ է նշել նաև 965 թ. վերաբերող մի հիշատակարանի տվյալների մասին, որի վկայակոչած իրադարձությունները վերաբերում են այդ տարեթվին նախորդող ժամանակաշրջանին. մի հայ, որ Հռոմ էր եկել ապաշխարության ուխտի, պապից (Վալսեմբար Նիկողայոս Առաջինից, որը IX դարի կեսից ի վեր նամակագրական կապ էր պահպանում իշխան Աշոտ Բագրատունու հետ) խնդրում է ս. Պետրոսի նշխարներից։ Պապի թույլտվությամբ ուխտավորն իր հետ տանում է սրբի մատը, որը հետագայում մեծարանքի առարկա է դառնում Կոզմիտ Կավառի Բղրայրի Գոմ գյուղում⁵⁴։

⁴⁸ AASS, „Commentarius praevius“, pp. 328—329.

⁴⁹ AASS, Appendix, p. 333.

⁵⁰ Jules Gay. L'Italie méridionale et l'Empire byzantin depuis l'avènement de Basile Ier jusqu'à la prise de Bari par les Normands (867—1071). Paris, 1904, pp. 181—182.

⁵¹ Նույն տեղում, էջ 583.

⁵² Zekiyan, pp. 825—826, 835; Histoire des Arméniens, pp. 285, 391.

⁵³ Antonio Gambacorta. Culto e pellegrinaggi a San Nicola di Bari fino alla prima crociata.—In: Pellegrinaggi e culto dei Santi in Europa fino alla Iª Crociata. Convegni del Centro di studi sulla spiritualità medievale, IV, oct. 1961. Todi, 1963, p. 500.

⁵⁴ Zekiyan, p. 841, Histoire des Arméniens, p. 392.

նշենք, որ իտալա-հայկական այս առնչությունների հետևանքով երբեմն հայերեն տեքստերի մեջ են թափանցել արևմտյան սոբերի անուններ. այսպես, հիշատակվում է Ս. Ջեննարո դի Բենվենտոն, մի սուրբ, որ հարգված էր հատկապես Հարավային Իտալիայում, ուր համեմատաբար մեծ թիվ կազմող հայերը ևս մասնակցել են նրա պաշտամունքի արարողությունը⁵⁵:

2. Հայերը Ֆրանսիայի քաղաքությունում

Ս. Սիմեոն դե Պոլիբոնի նման, ուրիշ հայ կրոնավորներ ևս եղել են Ֆրանսիայում և երբեմն նույնիսկ բնակություն հաստատել այնտեղ: Հայ ուխտավորները հետքեր են թողել Պերինյոյում (Պերիգոր գավառի նախկին մայրաքաղաքը, Ֆրանսիայի հարավ-արևմուտքում), որը հայտնի է X դարի վերջի իր եկեղեցով. վերջինս կրում է Սեն-Ֆրոն դը Պերինյո անունը, ունի բյուզանդական տիպի զմբիթներ: Անցյալ դարի վերջին Սեն-ժորժ դե Բարրի եկեղեցու հետ միասին քանդվեց նաև հայ ուխտավոր Հակոբի (Jacobus peregrinus armeniensis) գերեզմանը, ինչպես առավել է լատիներեն արձանագրությունում, այստեղ գտնվեց մի ծերունու կմախք և մի աղյուս, որի վրա խաչ էր փորագրված, իսկ խաչի թևերին՝ լատիներեն PAX LEX REX LUX (խաղաղություն, օրենք, թագավոր, լույս) չորս բառերը: Աղյուսը իրենից ներկայացնում էր կապարե խաչի ձևով և կաղապար, որոնք, հողին հանձնելու պահին, դրվում էին դիակների վրա. այս սովորությունը արժատավորված էր հատկապես XI—XII դդ.⁵⁶: Չնայած մենք այդ հաստատող փաստեր չունենք, այնուամենայնիվ թերևս կարելի է Հակոբի գալստյան ժամանակը համարել հենց այս ժամանակաշրջանը. նա կարող էր ուխտի եկած լինել Ս. Ֆրոնի (Ֆրոնտուսի)՝ Պերիգորում քրիստոնեություն տարածողի գերեզմանին, որը գտնվում է Սեն-Ֆրոն դը Պերինյո եկեղեցում: Հնարավոր է, որ նախքան այդ նա անցած լինի Լիմոժով՝ հարևան Լիմուզեն գավառով՝ III դարում Լիմուզենում քրիստոնեություն տարածած Ս. Մարսիալի գերեզմանի վրա աղոթելու համար: Դրժլուխտարար մեր տրամադրության տակ չկա ոչ մի Vita, որտեղից կարողանայինք կենսագրական մանրամասներ քաղել: Դրա փոխարեն մի անանուն հոգևորական ս. Գրեգուար դը Պիթիվին (ծնվել է X դարի երկրորդ կեսին, վախճանվել է XI դարի սկզբին, մարտի 16-ին) նվիրել է մի համառոտ Vita,⁵⁷ որը, սակայն, վավերականության երաշխավորություն ունի. հեղինակը սեփական վկայությունը լրացնում է հայ ուխտավորի օղնությամբ հրաշքով ապաքինվածների, ինչպես նաև վերջինիս ազգականների վկայություններով, որոնք Պիթիվին են եկել նրա մահվանից հետո⁵⁸:

Այսպես, նա մեզ տեղեկացնում է, որ հայտնի հայկական ընտանիքից սերած Գրեգուարը, վաճառելով ունեցվածքը, ծառայության է մտել Նիկողայոսի (Փոքր Հայք) արքեպիսկոպոսի մոտ: Իկյա նա ծառայել է վերջինիս պաշտոնը և հովանավորել բերել հեթանոսներին: Շուտով նա նախապատվությունը տալիս է մենակեցությանը և, երկու ուղեկցի հետ նախաձեռնած երկարատև ճանապարհորդության ավարտին, անցնում է Ալպյան լեռնաշղթան և դալիս Ֆրանսիա՝ Պիթիվին (Փարիզից հարավ)⁵⁹, ուր և կանգ է առնում աստծու կամքը: Տեղի տիրուհուց անհրաժեշտ թույլտվությունը ստանալով՝ նա հաստատվում է մեկուսի, Ս. Մարտին Մենակյաց եկեղեցու մոտ դրոշմով մի առանձնարանում: Այստեղ նա նվիրվում է քարոզչության և բարեգործական աշխատանքների, իր հյուրերին տրամադրելով այն սննդամթերքները, որ նրան ընծայում էին: Նրա գերեզմանի վրա բազմաթիվ հրաշքներ են կատարվել:

Գրեգուարը (Գրիգորը) կրում է Գրիգոր Լուսավորչի անունը, որ շատ է տարածված Հայաստանում: Հավանաբար ծագումով նա եղել է ոչ թե Մեծ Հայքից, այլ՝ Արևելյան Կապադոկիայից՝ Փոքր Հայքից:

Այս տարածքում, որ ավերածության էր ենթարկվել արաբ-բյուզանդական կոիվների հետևանքով, X դարի ընթացքում հիմնվեցին բյուզանդական ծառայության մեջ գտնվող հայ ղեկավարների գաղթավայրեր: Խաչիկ Առաջին կաթողիկոսի (971—992) օրոք բնակությունը արդեն

⁵⁵ Այս տեղեկության համար շնորհակալություն ենք հայտնում Փարիզի համալսարանի մետր-ասիստենտ տիկին Բենեդետտ Մարտեն-Իզարին:

⁵⁶ Jacques Bousquet. Les nimbes a anagramme, origine et brève fortune d'un motif roman.—Les cahiers de Saint-Michel de Cuxa. № 10, juillet 1980.

⁵⁷ AASS, մարտ, II, էջ 463—464:

⁵⁸ AASS, p. 462.

⁵⁹ Լուարեում, Օուեանի և էտամպի միջև:

բավական մեծ թիվ էր կազմում, հատկապես Սեբաստիայում, որպեսզի հայ եպիսկոպոսներ նշանակվեին, վերջիններիս նիկոպոլսի եպիսկոպոսական աթոռը (մոտ հարյուր կիլոմետրով ղեպի արևելք) հավանաբար անկախ չէր⁶⁰, նիկոպոլսի երիտասարդ եպիսկոպոսի՝ Գրիգորի կողմից հեթանոսներին հավատքի բերելու փաստը դուրս է դալիս վարքագրության շրջանակներից։ Նիկոպոլիսն ընդգրկվել էր Տերիկեի պալլիկյան պետության մեջ, որը IX դարի վերջին կործանվել էր վասիլ Առաջինի կողմից⁶¹, հետևաբար Գրիգորի քարոզները կարող էին հասցեագրված լինել հայ դուալիստներին։ Պիթիվիեում Գրիգորի անցկացրած ժամանակը պատմական տեսակետից ավելի լավ է ներկայացված։ Հեղինակն ընդգծում է, որ երկրի տիրուհին Աիլվիսան էր (Ալիսը)⁶²։ Հռոմում մահացած և հողին հանձնված Ռաինարդուսի այրին և Օուեանի ապագա եպիսկոպոսի՝ Օլգորիկուսի մայրը⁶³։ Բացի այդ, մեզ հայտնի է, որ նա եղել է էդ Առաջինի՝ Բուլայի կոմսի (976—996)⁶⁴ դուստրը, որի հողերը արևմուտքում և արևելքում սահմանակից էին Կապեսիյանների արքայական տիրույթներին։ Օուեանը և Պիթիվիեն, որ կախման մեջ էր առաջինից, զբոսնում էին Կապեսիյանների իրավասության տակ։ Օլգորիկուսը հայտնի է որպես Օուեանի եպիսկոպոս (1021 թ. մինչև 1035 թ.)⁶⁵ և Պաղեստին այցելած ուխտավոր⁶⁶, Այս ժամանակագրական տվյալները մեզ թույլ են տալիս ենթադրել, որ Գրիգորը Պիթիվիե է եկել Ֆրանսիայի թագավոր Ռոբեր Բարեպաշտի (996—1031) թագադրումից քիչ անց և մահացել 1021 թ. առաջ։

Ամենայն հավանականությամբ, ս. Գրիգորին Պիթիվիե էր բերել Ռոբեր թագավորի համբավը, որն իր Բարեպաշտ մականունը ստացել էր ռազմաթիվ կրոնական հաստատություններ հիմնելու համար։ Բացի այդ, Սենայի և Լուարայի միջև ընկած արքայական տիրույթում էին գտնվում այնպիսի նշանավոր եպիսկոպոսական դպրոցներ, ինչպիսիք էին Օուեանի, Շարտրի դպրոցները, որոնք զաստվանդում էր Ֆլյուրեր Շարտրեցի եպիսկոպոսը⁶⁷, Ուխտագնացության անթիվ էին հանդիսանում հատկապես այստեղ գտնվող ուխտատեղիները՝ Սեն Մարտեն զբոսը (Գրիգորը բաշխում է Ա. Սարտին Մենակյաց եկեղեցու մոտ գտնվող մի վայր), որի առաքանական-աբբայությամբ թագավորն էր, Ֆլյուրի-սյուր-Լուարը, ուր հողին էր հանձնվել ս. Բենեդիկտոսի մարմինը և որը 997 թ. պապից ստացել էր Փլյունի վանքին (Բուրգունդիա) շնորհված արտոնություններին հավասարազոր արտոնություններ⁶⁸։ Այս նշանավոր վանքը հիմնվել էր 910 թ. Բուրգունդիայի դուքսի կողմից՝ պայմանով, որ նրա վանականներն ազատ լինեին որևէ տեղական իշխանությունից (ֆեոդալական կամ եկեղեցական) և կախման մեջ լինեին միայն պապից։ Հետագայում Փլյունին թափ հաղորդեց XI դարի բարենորոգչական շարժմանը, որ հայտնի է «Գրիգորյան ռեֆորմ» անունով (Գրիգոր Յոթերորդ պապի անունից)։ Հենց Պիթիվիեում Աիլվիսան՝ մի բարեպաշտ ուխտավորի այրին, կառուցել էր տվել այն ռազմիկական, ուղղափառ վաղուց ամփոփվել էին ս. Գրեգորի զբոսը (ս. Գրիգոր Տուրեցու) և ս. Սալմոնի՝ Բրետանի (Ֆրանսիայի արևմուտքում) թագավորի և նորմաններին հաղթողի մասունքները⁶⁹։

Եթե մեզ չի հասել ուղղակի վկայություն այն մասին, որ հայ հոգևորականներին ընդունել է Ֆրանսիայի թագավորը, ապա նույնը չի կարելի ասել նորմանդիայի դուքսի մասին։ Սեն-Վանդրիկի վանքում 1074-ից 1087 թ. ընկած ժամանակամիջոցում կազմված մի ժողովածու, որ կրում է *Inventio et Miracula Sancti Vulfranni* վերնագիրը և ընդհանուր առմամբ շատ լավատեղյակ աղբյուր է, մեզ հաղորդում է հետևյալ տեղեկությունները Ռիշար Երկրորդ (996—1026) դուքսի մասին։ «Նա բարյացակամորեն էր ընդունում կուսակրոն և ոչ կուսակրոն հոգևորականներին և լավ էր վերաբերվում նրանց։ Ահա թե ինչու ստացվեց անպիսի»

⁶⁰ G. Dédeyan. L'immigration arménienne en Cappadoce au XI^e siècle.—Byzantion. 45, fasc. I, 1975, pp. 96—98.

⁶¹ J. Laurent. L'Arménie entre Byzance et l'Islam. Paris, 1919, pp. 248—256.

⁶² AASS, Vita, p. 463.

⁶³ Նույն տեղում, նաև ծան. f: Histoire des Pays de la Loire, publiée sous la direction de François Lebrun (այսուհետև՝ Lebrun. Pays de la Loire). Toulouse, 1972, p. 121.

⁶⁴ Jean-François Lemaignier. Le gouvernement royal aux premiers temps capétiens (987—1108). Paris, 1965, pp. 54—55.

⁶⁵ Lalanne. Pèlerinages, p. 28.

⁶⁶ Lebrun. Pays de la Loire, pp. 138—140.

⁶⁷ Fliche et Martin. Église, 7. pp. 360—361.

⁶⁸ AASS, Vita, p. 463 և ծան. f.

ոչ ամեն տեղից ամբողջ խմբերով նրա մոտ էին գալիս հոգևոր առաջնորդներ (պրելատներ) և դպիրներ, վանահայրեր և վանականներ: Հիացմունքի արժանի առատաձեռնությամբ նա միշտ ջանում էր ընծաներ մատուցել նրանց: Այդ բանի լավագույն վկաներն են հույները և հայերը, որոնց, այդ ժամանակ, նմանարինակ մեծ մի մարդու համբավը ստիպեց թողնել իրենց տունը, և որոնք նորմանների երկիրը եկան միայն նրա առատաձեռնությունից ղրղված, թողնելով իրենց հայրենի Հունաստանը (sic): Նա հաճախ պատվիրակներ էր ընդունում նույնիսկ Սինա լեռանից, որոնց միջոցով շատ ոսկյա և արծաթյա ընծաներ էր ուղարկում այնտեղ երկնահաճո կյանք վարող սրբերին⁶⁹:

Ռիշար Երկրորդը, որի օրոք նորմանդիայի դքսությունը շքեղորեն ծաղկեց, միջազգային կրոնական համարում էր ձեռք բերել շնորհիվ այն հոանդուն ջանքերի, որ նա չէր խնայում սե- վանականությունը վերստին արմատավորելու և դարգացնելու համար ըստ Քլյունիի վանքը հի- շեցնող իղեաների⁷⁰, ինչպես նաև այն պատճառով, որ իր հովանավորության տակ էր վերցրել Ռիշար դը Սեն-Վաննի նման որոշ բարենորոգիչների⁷¹: Այցելուների գալն ուներ նաև տնտե- սական զորպատճառներ. դուքսի անխափան կերպով համալրվող գանձարանը հարուստ էր և հնարավորություն էր բնօրնում նվիրատվություններ անել, որոնցից օգտվում էին, այլոց թվում, նաև Սինայի լեռան վանականները և հայերը⁷²: Սինայի լեռան վանականներից ամենանշանու- վորը Սիմեոն Սիրակուզեցին է, որը դուքս Ռիշարի մահվանից անմիջապես հետո Ռուանում ամ- փոխեց ս. Կատարինեի մասունքներին⁷³:

Հույների կողմից վերոհիշյալ աղբյուրը հիշատակում է նաև հայերին՝ վերջիններս գալիս էին հավանաբար նույն այն երթուղով, ինչ և մյուս հայ ուխտավորները, այսինքն՝ Բալկանե- րով և Իտալիայով, քանի որ ծագումով «Հունաստանից» էին, այսինքն՝ ինչպես, անկասկած, նկատի ունի հեղինակը, Բյուզանդական կայսրությունից: Բացի Ռուանից նրանք, հնարավոր է, գնում էին նաև Ս. Միքայել լեռը, դեպի ուր կատարվող ուխտագնացությունը հաճախ զուգակց- վում էր դեպի Մոնտե Գարպանո կատարվող ուխտի հետ⁷⁴: Հայերը գնացել են ավելի հեռու, դեպի սկանդինավյան երկրները, քանի որ Արի Գիտուն քահանան (1067—1148)՝ Islendigga bók-ի հեղինակը, հիշատակում է երեք հայ եպիսկոպոսների Իսլանդիա ժամանելու մասին. վերջիններս կարողացել են այստեղ դալ Հարալդ Նորվեգացի թագավորի օրոք (1044—1066), որը նրանց բերել էր հավանաբար կամ Բյուզանդիայից⁷⁵, որտեղ վարագնեի գվարդիայի հրա- մանատար էր եղել, կամ էլ, հնարավոր է, Կիևից⁷⁶, որի իշխանը նրան կնություն էր տվել Իր դստերը:

Նորմանդիայի դքսության և հարևան Ֆլանդրիայի կոմսության միջև կապերն այնքան սերտ էին, որ Ռոբերտ Նորմանդացին օգնության ձեռք մեկնեց կոմս Բոդուեն Չորրորդին (988—1035)՝ վերջինիս որդու բարձրագույն խոռվության ժամանակ, իսկ կոմս Բոդուեն Հինգերորդը (1035— 1067) օժանդակ զորք ուղարկեց նորմանդացի Գիյոմ Ապօրինածին (Վիլհելմ Նվաճողին) Անգ-

⁶⁹ Այս աղբյուրի մասին սիրով մեզ հայտնեց Լ. Մյուսսեն, մեր տրամադրության տակ դնելով նրա լատիներեն տեքստը՝ J. Laporte. Inventio et Miracula S. Vulfranni.—In: Mélanges de la Société d'histoire de la Normandie. XIVe série, 1938, p. 35, c. 17, ֆրանսերեն թարգմանությունը՝ տե՛ս Documents de l'Histoire de la Normandie, publiés sous la direction de Michel de Bouard. Toulouse, 1972, p. 85.

⁷⁰ Histoire de la Normandie, publiée sous la direction de M. de Bouard. Toulouse, 1970, p. 111.

⁷¹ Այս լոթառինգացի բարենորոգիչը ընդունեց նրա հովանավորությունը, որպեսզի հնա- րավորություն ունենա կազմակերպելու իր ուխտագնացությունը դեպի Պաղեստին՝ 1026 թ. (նույն տեղում):

⁷² Ռաուլ Գլաբեր (Raoul Glaber. Livre I, c. 5) նշում է, որ Սինայի լեռան վանականները ամեն տարի գալիս էին Ռուանի արքունիքը:

⁷³ Jean Ebersolt. Orient et Occident. Recherches sur les influences byzanti- nes et orientales en France avant les Croisades, pp. 81—82.

⁷⁴ L. Musset. Recherches sur les pèlerins et les pèlerinages en Normandie jus- qu'à la première Croisade.—Annales de Normandie. № 3, oct. 1962, pp. 129—132.

⁷⁵ Y. R. Dachkévitich. Les Arméniens à Kiev (jusqu'en 1240).—In: Revue des Études Arméniennes. Nouvelle Série, t. X, 1973—1974, p. 338.

⁷⁶ Նույն տեղում, էջ 339:

լիալի նվաճման ժամանակ⁷⁷։ Կրոնական ասպարեզում ևս առնչություններ եղան, քանի որ վանական ռեֆորմատոր Ռիչարդը Սեն-Վաննը օգտվեց և՛ Ֆլանդրիայի կոմսի, և՛ նորմանդիայի դուքսի օժանդակությունից։ Ինչպես նորմանդիայում, այնպես էլ Ֆլանդրիայում եղել են հայտնաբերվածներ։ XI դարի առաջին երրորդում Ֆլանդրիայի կոմսությունն են եկել Մակարիոսը (Մակար) և Ժորիսը։ Վարքագրության ծաղկման շրջանում, որ Ֆլանդրիան ապրում էր XI դարում, ս. Մակարիոս Գենտացին (ծնվել է X դարի երկրորդ կեսին, մահացել 1012 թ. ապրիլի 10-ին) դարձել է երկու Vita-ների հերոսը։ զրանցից առաջինը, որ շատ համառոտ է⁷⁸, գրված 1017 թ. առաջ⁷⁹, իր դոկումենտը պարտական է Սեն-Բավոնցի մի վանականին, որը 1011 թ. Գենտում (Ֆլանդրիա) հյուրընկալել է Մակարիոսին և խնամել նրան հիվանդության ժամանակ։ Տեղյակ լինելով Արևելքին վերաբերող փաստերին՝ հեղինակը մի կողմ է թողնում Մակարիոսի հնավոր դեգերումները և անդրադառնում լուկ նրան, ինչ ինքն է տեսել կամ լսել⁸⁰։ Մակարիոսը՝ «նախաստանում» գտնվող Անտիոքի արքեպիսկոպոսը, երեք ուղեկցի հետ Գենտ է գալիս էրեմիուզուսի վանահայրության օրոք։ Չնայած նրա օտարոտի բարեբերին, վանականները եղբայրարար են ընդունում նրան և թախանձում մնալ վանքում։ Ի վերջո նա ստիպված է լինում վերադառնալ այնտեղ, քանի որ նավահանգստում, որտեղից ցանկանում էր նավով մեկնել, հիվանդանում է։ Ս. Բավոնի հայտնության շնորհիվ ապաքինվելով, նա նորից ցանկանում է մեկնել հայրենիք, սակայն 1012 թ. ապրիլի 10-ին մահանում է ժանտախտի համաճարակից, որ սկսվել էր Գենտի շրջանում։ Ըստ Vita-ի, բազմաթիվ հրաշքներ են տեղի ունեցել նրա հիվանդության ընթացքում, ինչպես նաև նրա թաղումից հետո եկեղեցու գետնափոր դամբարանում։

Որ Մակարիոսն իրոք եղել է Արևմուտքում, միանգամայն հավաստի է թվում այն պատմաաղբարհագրական մանրամասների շնորհիվ, որոնք լույս են սփռում նշված ժամանակաշրջանի վրա։ Մակարիոսը տեղ է հասել 1011 թ.⁸¹ էրեմիուզուսի վանահայրության օրոք (998—1017), որը 1010 թ. ի ցույց է հանել ս. Բավոնի մարմինը⁸²։ Ինչպես այդ երևում է գիշերային տեսիլից, որի մասին պատմվում է Vita-ում, Մակարիոսին այստեղ էր բերել VII դարում Գենտի շրջանում քրիստոնեություն տարածողների՝ Ս. Բավոնի և Ս. Ամանդի համբավը⁸³։ Բացի այդ, հենց այստեղ՝ Ֆլանդրիայի կոմսությունում էր, որ Բողուն Չորրորդի օրոք մեծ թափով կենտազորովում էր 1008 թ. Ռիչարդը Սեն-Վաննի անցկացրած ռեֆորմը⁸⁴։ Ֆլանդրիան, որ կապի մեջ էր գտնվում Անգլիայի հետ, որտեղից բուրդ էր ներմուծում, արդեն ուներ այնպիսի աշխույժ նավահանգիստներ, ինչպիսիք էին Արդեննուրգը և հատկապես Բրյուզզեն⁸⁵, որտեղից էլ, հնարավոր է, ցանկանում էր նավով մեկնել Մակարիոսը։ Դա (նորմանդիայի նման) մի բարգավաճ տերիտորիալ իշխանություն էր, որ խստորեն կառավարվում էր Բողուն Չորրորդի կողմից և որի պատմության մեջ Մակարիոսի մահվան պատճառը հանդիսացած համաճարակը (իրականում ոչ ժանտախտի)⁸⁶ եղել է սոսկ մի միջադեպ։

Երկրորդ Vita-ն գրվել է 1067 թ. Սիգերիկուսի վանահայրության օրոք, նույն այն տարում, երբ ս. Մակարիոսի մարմինը սրբացվել է Ֆրանսիայի թագավոր՝ անչափահաս Ֆիլիպ Առաջինի և վերջինիս խնամակալ Բողուն Հինգերորդի ներկայությամբ⁸⁶։ Ոչ միայն հանգամանքների, այլև XI դարի ընթացքում ֆլամանդական վարքագրության ապրած զարգացման բն-

⁷⁷ François L. Ganshof. La Flandre sous les premiers Comtes. Bruxelles, 1949, p. 36 et p. 40.

⁷⁸ AASS, ապրիլ, I, էջ 875—876.

⁷⁹ Էրեմիուզուսի արքահայրության օրոք (998—1017), *ibid.*, „Commentarius historicus“, p. 874.

⁸⁰ *Ibidem*, Iere Vita, p. 875.

⁸¹ *Ibidem*, „Commentarius historicus.“

⁸² Albert d'Haenens. Saint Bavon.—In: Bibliotheca Sanctorum T. II, col. 982—983.

⁸³ Ganshof. La Flandre, pp. 84—87; E. de Moreau. Les abbayes de Belgique (VII—XIIe siècles). Bruxelles, 1952, pp. 55—57.

⁸⁴ Ganshof. La Flandre, p. 72.

⁸⁵ Jean-Noël Biraben. Les hommes et la peste en France et dans les pays européens et méditerranéens. Paris—La Haye, 1975—1976, t. I, 45.

⁸⁶ AASS, „Commentarius historicus“, p. 874.

րումով⁸⁷ հեղինակը գրել է մի երկար, հանգամանալից պատմություն⁸⁸, հատկապես Արևելքում Մակարիոսի անցկացրած տարիների մասին:

Մենք տեղեկանում ենք, որ նա, լինելով մի հայ իշխանի՝ Միրայելի որդին, Անտիոքում (Հյուսիսային Սիրիայում) հաղորդակից է դարձել հայկական և հունական մշակույթին, որտեղ և հաջորդել է իր հորեղբորը՝ վերջինիս եպիսկոպոսական պաշտոնում: Այնուհետև նա, ամեն ինչ թողնելով, շուրջ ուղեկցի հետ մեկնում է Ս. Տեղիք այցելության: Երուսաղեմում նա լավ ընդունվություն է գտնում Հովհաննես պատրիարքի կողմից, մինչդեռ հրեաները և սարակինոսները, որոնց նա ի վերջո հավատքի է բերում, տանջանքների են ենթարկում նրան: Չնայած բնատենիքի հետապնդումներին, որը ցանկանում էր վերականգնել նրա պաշտոնը և ունեցվածքը, սրան այնուամենայնիվ հաջողվում է բռնել Արևմուտքի ճամփան, ուր նա այցելում է Բավուրիա, Ֆրանկոնիա և Ֆլանդրիա (Գերմանիայում): Այստեղ նրա անցկացրած ժամանակամիջոցի նկարագրությունը հյուսված է նույն իրադարձություններից, ինչ և առաջին Vita-ում էր:

Մակարիոսի տեղափոխվելը Անտիոք միանգամայն հավանական է: Նիկեոսի Փոկասի, Հովհաննես Զմշկիկի և Վասիլ Երկորդի օրոք Հյուսիսային Սիրիան արաբներից հետ նվաճելուց հետո (Անտիոքը գրավվեց 968 թ.) այնտեղ ուղարկվեցին մեծ թվով հայկական կաթողիկոսներ: Յուսուպ Անտիոքացին՝ Եգիպտոսից մի փախստական քրիստոնյա, որ գրել է XI դարի սկզբին, պնդում է, որ Անտիոքի հայերը ընդվզելու հակում ունեին⁸⁹ և որ Անտիոքի ու Տրիպոլիի միջև ընկած տարածքը ենթարկվել էր ռազմական գաղութացման⁹⁰: Հայ պատմիչ Ասողիկը վկայում է խաչիկ Առաջին կաթողիկոսի օրոք (971—992) Կիլիկիայի քաղաքներում և Անտիոքում հայ եկեղեցական նվիրապետության հաստատման մասին⁹¹: Իր հորեղբորը հաջորդած Մակարիոսը համանաբար եղել է Անտիոքի երկրորդ հայ եպիսկոպոսը (մոտավորապես 1000 թ.): Տապանաբերում, որը պահպանվել է մի ձեռագրում, նա հիշատակում է որպես «Archiepiscopus de monastrio S. Simeonis de Antiochia»⁹²: Եվ իրոք, Անտիոքի արևմուտքում՝ Սքանչելյաջ լեռան վրա, իսկապես գտնվում էր Ս. Սիմեոնի անունը կրող մի վանք, որտեղ կային հույներ, վրացիներ և, անշուշտ, հայեր⁹³: Մակարիոսի մոտ նկատվում է այն մշակութային երկվությունը, որ կարելի է գտնել հայ հոգևոր առաջնորդներից շատերի մոտ, և երբ վարքագիրը նշում է, որ նա կատարելապես տիրապետում էր «թե՛ հույն, թե՛ հայ հոգևորական արվեստին»⁹⁴, այդպիսով կրկնում է ազգային ժամանակագիրների կողմից հաճախ օգտագործվող մի արտահայտություն, որոնք, որպես կանոն, անտարբեր չէին երկվակության փաստի նկատմամբ:

Դեպի «անապատ» ունեցած հակումը նույնքան հատուկ է նրան, որքան և նրա հայրենակիցներից շատերին: Շատերի նման նա էլ ուխտագնացություն է կատարում ոչ թե ինչ-որ ապաշխարության հետ համակերպվելու, այլ աշխարհից խույս տալու համար: Աշխարհուրացության նման օրինակներ տվել են նաև Մեծ Հայքի մենակյացներից Վարդիկը և Կարմիրը⁹⁵: Սակայն իսկական ուխտագնացության ձև աշխարհուրացությունն ընդունել է միայն XI դարի վերջին, Գրիգոր Վկայասի կաթողիկոսի աստանդականություններից հետո: Ս. Տեղոց այցելությունը Պաղեստինում նկարագրված է մեծ ճշտությամբ. Կանան, Նաղարեթը, Փրկչի Գերեզմանը և վանդական երթուղու մասն էին կազմում: Սխալ կարող է լինել միայն հիշատակությունը Հովհաննես պատրիարքի մասին (թեև երուսաղեմի պատրիարքների ցուցակն ընդհատվում է

⁸⁷ Baudoin de Gaiffier. Études critiques d'hagiographie et d'iconologie. Bruxelles, 1967, VI. L'hagiographie dans le marquisat de Flandre et le duché de Basse-Lotharingie.

⁸⁸ AASS, pp. 878—891.

⁸⁹ Yahya d'Antioche. Histoire, traduite de l'arabe par I. Kratchkovsky et A. Vasiliev.—In: Patrologia Orientalis. T. XVIII, fasc. 5, Paris, 1957, et t. XXIII, fasc. III, Turnhout, 1976, 2ème partie, t. XXIII, fasc. 3, pp. 378 et 428.

⁹⁰ Ibidem, pp. 443 et 458.

⁹¹ Ասողիկ, էջ 258, trad. Macler, p. 141.

⁹² AASS, „Commentarius historicus“, p. 873.

⁹³ Jean Mécérian. Les inscriptions du Mont Admirable.—In: Mélanges de l'Université Saint-Joseph. T. XXXVIII, 2, pp. 297—330.

⁹⁴ 2ème Vita, p. 879.

⁹⁵ Ասողիկ, էջ 176, trad. Macler, p. 33.

⁹⁶ Grumel. Chronologie, p. 452.

1006-ից 1021 թ. ընկած ժամանակամիջոցում)⁹⁶, սակայն այն կարող է վերագրվել նաև Ս. Բաղաթի հայ եպիսկոպոսին:

Հալածանքները, որոնց ենթարկվել է Մակարիոսը, հավանաբար վերաբերում են քրիստոնեության դեմ Նիզիտոսի ֆաթիմյան խալիֆ ալ-Հաթիմի սկսած հալածանքի ժամանակաշրջանին. Հարության եկեղեցու ավերումից առաջ (1009—1010 թթ.⁹⁷), 1007 թ., որ կարող է Մակարիոսի ուխտի մեկնելու տարին լինել, հայ պատմիչ Մատթեոս Ուռհայեցին նկարագրել է քրիստոնյաների մի մեծ կոտորած, որ տեղի է ունեցել վերոհիշյալ սրբավայրում⁹⁸, հավանաբար Նազկավարդի կիրակնօրյա թափոռի երթն արգելելու նպատակով⁹⁹:

Ինչ վերաբերում է Մակարիոսի ղեկավարմանը Արևմուտքում, ապա երկրորդ Vita-ում գրանց նկարագրությունը լրացված է էս մի գրվագով, ուր պատմվում է Բավարիայի ու Ֆրանկոնիայի ղեկավարությունների և էնոչի կոմսության տերիտորիայով Դերմանական կայսրությունը կտրել-անցնելու մասին. Ֆրանկիա հասնելու համար այս երթուղին միանգամայն նպատակահարմար էր:

Ինչպես մեզ թվում է, այս երկրորդ Vita-ն, որ սոսկ գիտական բնույթի մի բարոյախոսություն չէ, իրենից ներկայացնում է Մակարիոսի մահվանից հետո ի մի բերված տեղեկությունների շարադրանքը. Ֆրանկոնիայի և Արևելքի միջև գոյություն ունեցած փոխադարձ կապի վկայություններից է Բիշար զը Սեն-Վանսի ուխտադնացությունը, որը 1026 թ. Անտիոքում հանդիպել է բազմաթիվ հոգևորական Սիմեոն Սիրակուզեցուն¹⁰⁰. բացառված չէ նաև, որ ս. Գրեգորիոս զը Պիթիվիեի նման, Մակարիոսին էլ այցելության եկած լինի նրա ընտանիքը, որին կարող էր այստեղ բերել վերջինիս հոշակը: Մյուս կողմից, առաջին Vita-ն հայտնում է, որ «գլուխն չէր մտապահել և մեկնաբանել նրա ճանապարհորդությունը»¹⁰¹: Դեռևս 1019 թ. Սեն-Բավոն վանքի սրբերի անվանացանկերից մեկի հեղինակը վկայակոչում է «այն բազմաթիվ աղիտները, որոնց ենթարկվեց Մակարիոսն իր ուխտադնացության ընթացքում»¹⁰²: Այստեղ հավաքված տեղեկությունները հնարավորություն են տվել ավելի ճշգրիտ նկարագրելու Արևելքը, ինչպես նաև հայերի ասորիներից ղանաղանելու (մի հանգամանք, որ բացակայում է առաջին պատմության մեջ):

Մակարիոսի մահվանից մոտ քսան տարի անց մի այլ հայ՝ Ժորիուսը (Ժորիս)¹⁰³, գնացել է նրա հետքերով: Մեր տրամագրության տակ եղած աղբյուրները միայն վիճաբանական բնույթի են. Բեթյունի Ս. Բարդուղիմեոս եկեղեցում ղեկավարված մի քարի վրա եղել է հետևյալ արձանագրությունը, որ XVI դարում հրատարակվել է Մուանյուսի կողմից. «Երանելի Ժորիուսը մահացավ օգոստոս ամսվա սկզբից յոթ օր առաջ»¹⁰⁴: Նա եկել էր Միհ Հայքից: Եղել էր Սինայի լեռան եպիսկոպոսը: Նրա հորը կոչում էին Ստեփանոս, մորը՝ Հեղինե: Նրանք յոթ ելրայր էին: Նա վախճանվեց 1033 թ.: Մակարիոս»¹⁰⁵: Քանի որ արձանագրությունում «Մակարիոս» բառից առաջ կետագրական նշան չկա, Ս. Բարդուղիմեոսի կանոնիկոսներն իրենց օրենքներից մեկում արձանագրության տակ ստորագրողին ներկայացրել էն որպես Ժորիուսի եղբայրը, այդպիսով նույնացնելով վերջինիս Մակարիոս Անտիոքացու հետ¹⁰⁶: Քանի որ Սինայի Ս. Կատարինե վանքի և Նորմանդիայի միջև գոյություն են ունեցել սերտ կապեր, ուստի ամենակին էլ բացառված չէ, որ Սինայի վանականներից մեկը հասած լինի մինչև Արտուա՝ Ֆրանսիայի նյութեր:

Նշված ժամանակահատվածում Բեթյունի սենյորները նոր էին կառուցել մի եկեղեցի՝ Ս.

⁹⁷ Marius Canard. Al-Hakim.—In: Encyclopédie de L'Islam. Nouvelle Serie, t. I, p. 80.

⁹⁸ Chronique, édit. de Jérusalem, pp. 52—53 et p. 362, trad. Dulaurier, pp. 37—38 et p. 251.

⁹⁹ M. Canard. Al-Hakim.

¹⁰⁰ Ebersolt. Orient et Occident, p. 82.

¹⁰¹ AASS, p. 875.

¹⁰² AASS, „Commenarius historicus“, p. 873.

¹⁰³ Raymond Janin. Jorio.—In: Bibliotheca Sanctorum. T. VII, col. 1026—1027: AASS, հուլիս, VI, էջ 340—341:

¹⁰⁴ Հուլիսի 26-ին:

¹⁰⁵ AASS, p. 341.

¹⁰⁶ AASS, pp. 340—341.

Բարդուղիմեոսի նշխարները պատսպարելու համար. ըստ ավանդության այս առաքյալը եկել է Հայաստանից: Բացի այդ, նրանց իրավասության տակ էր գտնվում նաև Արասը, դեպի ուր օտարերկրացուն կարող էր ձգել ս. Վասստի պաշտամունքը: Ժորիուսը (Գևորգը) կարող է հայ եղած լինել, սակայն քաղկեդոնական, քանի որ Սինայի Ս. Կատարինն վանքը պատկանում էր Կոլոններին: X դարում բյուզանդական ազդեցությունը Հայաստանում նպաստել էր այդ տենդենցի ուժեղացմանը: Վանա լճի շրջանում գտնվող նարեկա վանքը, ուր փայտատակեց ս. Գրիգոր նարեկացու տաղանդը, ժամանակ առ ժամանակ ունեցել է դեպի քաղկեդոնականությունը հակված վանականներ¹⁰⁷:

Արևմուտքի հետ հայերի ունեցած այս առնչությունները հաստատվում են նաև մշակութային առումով: Օտենյան մի ձեռագիր, որի մեջ ամփոփված են ս. Ժերոմի (Հերոնիմոսի) ուղերձները, ավարտվում է լատիներեն-հայերեն բառարանով, որը թվագրվում է X դարով, զբաղված է լատիներեն տառերով և որում տեղ են գտել ոչ միայն օրերի, թվերի, սննդամթերքների, նյութերի անվանումները, այլև եկեղեցական տերմիններ¹⁰⁸: Ի դեպ, նույն այս դարաշրջանից մեկ հասել են նաև հունարեն-լատիներեն բառարաններ, մի փաստ, որ ցույց է տալիս, թե նշված ժամանակաշրջանում արևելյանների և արևմուտքի բնակիչների միջև հաստատված բազմաբնույթ փոխհարաբերությունների պայմաններում նման «աշխատանքային գործիքներ» դարձել էին անհրաժեշտ: Ու. Կիպրիանոսի աշխատություններն ամփոփող IX դարի մի ձեռագրի պահպանակները ծածկված են հայերեն գրերով, որ հետագայում են ավելացվել. այս գրերով ցանկացել են գրավոր վարժություն կազմել Սեն Դենիի արքայական վանքի (Իլ-դը-Ֆրանսում)¹⁰⁹ վանականներից մեկի համար: Որոշ արվեստաբաններ, ինչպես, օրինակ, Յուրդիս Լալտրուշայտիսը, հենվել են Արևմուտքում հայ ուխտավորների ներկայության փաստի վրա՝ հայտնելու համար այն կարծիքը, որ հայկական ճարտարապետությունը, ուր հանդիպում են խաչաձևվող կամարաջղերի վրա հենվող կամարներ, իր ազդեցությունն է թողել գոթական (սլաքաձև) կամարի կազմավորման վրա¹¹⁰: Որքան էլ այդ պարագրքսալ թվա, աղբյուրները, սակայն, վկայում են ավելի շուտ ֆրանկյան ազդեցության մասին. 895—906 թթ. Սյունյաց եպիսկոպոսը, որի նստավայրը Տաթևի վանքում էր, կառուցել է տալիս Ս. Պետրոսի և Ս. Պյոլոսի անունը կրող աթոռանիստ եկեղեցին, որի օծումը կատարվում է ըստ արևմտյան ծիսակարգի՝ մի փաստ, որ միակն է նշված դարաշրջանում¹¹¹: Մյուս կողմից, Ստեփանոս Օրբելյանը, որ Տաթևի արքեպիսկոպոսն էր 1285 թ., այս եկեղեցու մասին հայտնում է. «Յակոր¹¹² ետ ածել նկարիչս և դառախս որ է պատկերագործ ի հեռաւոր աշխարհէ ֆռանգ ազգաւ...»¹¹³, հիշյալ արտահայտությամբ բնորոշվում էին Արևմուտքի բնակիչներից ֆրանսիացիները և իտալացիները¹¹⁴: Դրան հակառակ, հայ ուխտավորների ներկայությունը Արևմուտքում, ինչպես երևում է, պատճառ չի դարձել բազմաթիվ արևմտյան սրբերի պաշտամունքի տարածման համար Հայաստանում: Եթե հայկական աղբյուրները, ինչպես նշվեց վերևում, հիշատակում են ս. Ժան-վիեի (Յանուարիոսի) մասին, ապա լուր է հալլիս, որ մեծ ժողովրդականություն վայելող այնպիսի մի սրբի մասին, ինչպիսին, ասենք, Սեն Մարտեն դը Տուրն էր:

¹⁰⁷ I. Kechichian. (l'Introduction au) „Livre des Prières“ de Saint Gregoire de Narek, p. 34—35.

¹⁰⁸ H. O mont. Manuel de Conversation arménien—latin du Xe siècle.—In: Bibliothèque de l'École des Chartes. T. XLIII, 1882, pp. 563—564.

¹⁰⁹ F. Macler. Particularités arméniennes de manuscrits latins.—In: Revue des Études arméniennes. Ancienne Série, t. V, fasc. I, 1925, pp. 147—149.

¹¹⁰ Le problème de l'ogive et l'Arménie. Paris, 1936.

¹¹¹ N. et M. Thierry. Peintures murales de caractère occidental en Arménie, pp. 180 et 186.

¹¹² Տաթևի հոգևոր առաջնորդը 918-ից մինչև 958 թ.:

¹¹³ Պատմութիւն նահանգին Սիսական, հրատ. Շահնազարեանցի. հ. Ա, էջ 302, trad. Brosset, p. 50 („զաւոախ“ բառը հունարէն ζογγραφος-ի աղավաղված ձևն է, Brosset, № 3), հղումը տե՛ս N. et M. Thierry. Peintures murales, p. 182.

¹¹⁴ Նույն տեղում, էջ 194:

3. Մյուս արևելիցներ

Հայ ուխտավորներից բացի Արևմուտք են եկել նաև այլ արևելիցիներ: Մենք արդեն նշեցինք նեստորական Իվոյի մասին, որը X դարի վերջին հեռացել էր Ռեմզի: Սակայն Արևմուտք գալու համար ամենից ավելի մեծ հնարավորություններ, անկասկած, հույներն ունենին:

Եվ իրոք, Հարավային Իտալիան նրանց համար մի բնական տարանցիկ կայան էր. Ս. Վասիլի ուխտի հույն վանականությունը, որ մինչև IX դարի արարական արշավանքները շատ մեծ թիվ էր կազմում, XI դարի առաջին կեսում իսկական վերածնունդ է ապրում: Նույնիսկ 1054 թ. Հռոմի և Կոստանդնուպոլսի միջև կայացած պառակտումից հետո էլ նրանց որոշ մասը կանոնականացվեց հոռոմեական եկեղեցու կողմից¹¹⁵, Բյուզանդական կայսրերը, որոնց հարավ-իտալական տիրույթները մոտ էին Մոնտե-Կասսինսյի աբբայությանը, մեծ հարգանք էին ցուցաբերում «նրանցի հայո Բենեդիկտոսի» նկատմամբ և շոսյուրեն ողջովում էին վանքը պարզենքով¹¹⁶:

Հույն ուխտավորներից ս. Սիմեոն Սիրակուզեցին ամենից ավելի է հիշեցնում հայ ուխտա-դնացիներին, եթե ամփոփելու լինենք վերջիններիս ղեկավարները. Կոստանդնուպոլսում ուսումնա-վարտելուց հետո նա լինում է Նրոտաղեմում, ուր առաջնորդում է ուխտավորներին, Սիմայի Լեոան վանքում զստնում է վանական, դալիս է Անտիոք, որտեղից 1026 թ. նրան իր հետ տա-նում է ուխտի եկած Ռիշար դը Սեն-Վաննը, այնուհետև բռնում է Արևմուտքի ճամփան, այցել-լում Հռոմ, ապա Ռուան՝ Նորմանդիա, ուր հույս ունեն հանդիպել դուքս Ռիշար Երկրորդին (մա-հացել է 1026 թ.) և զրամ ժողովել Սիմայի վանքերի համար. զնում է Վերդեն (Գերմանիա), քաղաքի արքեպիսկոպոսի՝ Պոպուոնի հետ նորից մեկնում է Ս. Տեղիք և ի վերջո հանդիմանում Տրիբում, ուր և ապրում է ճղնավորի կյանքով՝ Պորտ Նուարում, IV դարի հռոմեական ավերակների մեջ հաստատվել իր խոյը, մինչև 1035 թ. ժանտախտի համաճարակին զոհ դառնալով¹¹⁷: Նշենք, որ Ռուանի (Նորմանդիայում) վանականները XI դարի սկզբին փորձում են իրենց քաղաքը դարձնել ուխտագնացության մեծ կենտրոն: Ռուանին իշխող մի բլրի վրա նրանք փորձում են ստեղծել մի փոքրիկ Ս. Միքայելի Լեո՝ այն դարձնելով մեծի մրցակիցը, սակայն նրանց փոր-ձը ձախողվում է: Սիմայի վանքից Նորմանդական Լեոան Ս. Երրորդություն վանքն են տեղա-փոխվում Ս. Կատարինե Ալեքսանդրիացու կարծեցյալ մասունքները: Ս Սիմեոն Սիրակուզեցու ներկայությամբ Ռուանում այդ ժամանակահատվածում նպաստում է Սիմայի Լեոան հետ կապ-պահպանելուն: Նա, իհարկե, օգնել է այդ դործին, սակայն նրա ղեկը չսլետք է չափազանցել: Անհրաժեշտ է նշել նաև, որ այդ ժամանակաշրջանում Նորմանդիայի դուքսերը ձգտում էին ա-պացուցել, թե Նորմանդիան և Ֆրանսիան ամենևին էլ նույն բանը չեն, և մեծ կարևորություն էին տալիս այն ամենին, ինչը Նորմանդիան կապում էր օտար երկրների հետ: Դա չի նշանա-կում, որ արևելիցիները (հույն կամ հայ) այստեղ մեծ թիվ են կազմել: Վանականները, որոնք վերը հիշատակվեցին որպես «իրենց հայրենի Հունաստանից» եկածներ, գալիս էին Երկու-Լեոք հողիանոց փոքրիկ խմբերով, այնպես որ գաղութ հիմնելու մասին խոսք լինել չի կարող¹¹⁸: XI դարի կեսին հույն վանականներ կային Օրիոլի եկեղեցում (Պրովանս): Նույն այս ժամանա-կաշրջանում էր, որ Սիմայի Լեոան վանականները Պուատուով անցան Անգուլեմ¹¹⁹: Հիշատա-կություն կա նույնիսկ մի սարակինոսի մասին, որին Երուսաղեմում հավատքի էր բերել մի ակ-վիտանացի և որը ուխտի էր եկել Սենտ-Ֆուա-դը-Կոնք¹²⁰:

Եթե Հռոմեական եկեղեցին հայ ուխտագնացների նկատմամբ ցուցաբերել է, ինչպես տե-սանք, առանձնահատուկ լավ վերաբերմունք և մինչև իսկ սրբացրել նրանց, ապա միայն այն պատճառով, որ հայ եկեղեցին հաճախ էր ընդհարվում բյուզանդական եկեղեցու հետ և որ, ալգայիտով, Կոստանդնուպոլսի ղեմ ստեղծվում էր մի տեսակ միասնական ճակատ:

¹¹⁵ Bernard Leid. Rome, Kiév et Byzance a la fin du XIe siècle. Paris, 1924, pp. 118—120.

¹¹⁶ Նույն տեղում, էջ 103—104:

¹¹⁷ Jean Ebersolt. Orient et Occident, pp. 81—82.

¹¹⁸ Այս տեղեկությունների համար մենք շնորհակալություն ենք հայտնում Ռուանի հա-մալսարանի դասախոս պ. Լյուսիեն Մյուսսեին:

¹¹⁹ Jean Ebersolt. Orient et Occident, pp. 82—83.

¹²⁰ Նույն տեղում, էջ 82:

Հայ հոգևորականների՝ դեպի Արևմուտք կատարած այս ուղևորությունները, որոնց դրդապատճառը «աշխարհից հրաժարվելու» արևելյան ավանդույթն էր և որոնց նպատակն էր ձրվելով դեպի այն եկեղեցին, ուր հասունանում էր Գրիգորյան ղեկավար, հող նախապատրաստեցին այն քաղաքական և կրոնական փոխհարաբերությունների համար, որ հաստատվեցին 1045 թ. Բյուզանդիայի կողմից Բագրատունյաց թագավորության անբաժանելի ենթարկվելուց հետո:

Հաղարական թվականներին ուխտագնացները նախորդել են Գրիգոր Երկրորդ Վկայասերին՝ աստանդական կաթողիկոսին: Ընտրվելով 1065 թ., սելջուկյան արշավանքների դաժան շրջանում, մասամբ գեպի մենակեցություն ունեցած հակումից դրված, 1069 թ. Գրիգորը թողնում է իր պաշտոնը¹²¹, ինչպես այդ արել էին Մակարիոսը Անտիոքում և Գրիգորը Նիկոպոլսում: Մի քանի տարի անց, 1074 թ., նա դնում է Կոստանդնուպոլիս, որտեղ զբաղվում է հունարեն աշխատությունների թարգմանությամբ: Այնուհետև նա, ըստ Մատթեոս Ուոհանցու և Կիրակոս Գանձակցու, լինում է Հռոմում՝ Դրիգոր Յոթերորդ պապի մոտ և լավ ընդունելություն գտնում ֆրանկների կողմից: Հնարավոր է, որ պապի 1074 թ. դիմումը Արևմուտքի իշխաններին ի ներպատահար էր, հայերի և ասորիների՝ հանդիսացել է այս այցելության արձագանքը: Գրիգորը նախով մեկնում է ֆաթիմյան Նգիպոսոս, որի վեզիրն այդ ժամանակ հայազգի Բաղր-ալ-Ջամալին էր և ուխտի է գնում Թեբալիդի սրբավայրերը¹²², 1099 թ. Երուսաղեմում նա ներկա է լինում խաչակիրների գալուստյանը¹²³, մահանում է 1105 թ., կյանքի վերջին տարիներն անցկացնելով Սև Լեռան վրա, որ նման էր Կիլիկիայի Աթոս լեռանը¹²⁴:

Արևմուտքում գոյած Vita-ների տվյալները հաստատում են վերջերս հնագիտության ասպարեզում կատարված մի հայտնաբերություն: Գերմանիայում հաջողվել է իդենտիֆիկացնել Դրիգոր Եպիսկոպոսի աճյունը: Նա եկել էր Հայաստանից (անկասկած թուրք-սելջուկների արշավանքների պատճառով) որպես «ոգջ մնացած», «հայրենակիցների» հետ (ինչպես մատնանշում է լատիներեն արձանագրությունը), վախճանվել է Պասսաու քաղաքում 1093 թ. և թաղվել Նիդերնբուրգի վանք-եկեղեցում, Ուրբանոս Երկրորդ պապի կողմից Առաջին խաչակրաց արշավանքի հայտարարման նախօրեին¹²⁵:

1000-ական թթ. հայ ուխտագնացները ուղի են հարթել այն հայերի համար, որոնք ավելի ուշ այցելել են Գրիգոր Յոթերորդ պապին: Նրանք, իհարկե, նպաստել են նաև այն բանին, որ Հայաստանը հայտնի դառնա ոչ միայն Հռոմում, այլև Ֆրանսիայի և Իտալիայի նորմաններին, սրունք 1098 թ. ի վեր Կիլիկիայի հայ իշխանների հարևաններն էին, ինչպես նաև հյուսիսի ֆրանկներին, որոնք նույն թվականին ստեղծել էին Եդեսիայի հայ-ֆրանկյան կոմսությունը:

Խաչակրաց արշավանքների շրջանը նոր թափ է հաղորդում հայերի ծանոթացմանը Արևմուտքին: Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիո»-ում հիշատակվում են ուխտագնացության այնպիսի խոշոր կենտրոններ, ինչպիսին Սանտիագո դե Կոմպոստելան էր (Իսպանիայի հյուսիս-արևմուտքում):

Արևմտյան հոգևոր մատենագրությամբ հետաքրքրվել են Կիլիկիայի հայ հոգևոր առաջնորդները. XII դարի վերջին ս. Ներսես Լամբրոնացին թարգմանել է Գրիգոր Մեծ պապի կենսագրությունը, որը VI դարի վերջից մինչև VII դարի սկիզբն ընկած ժամանակահատվածում հանդիսանում էր Արևմտյան եկեղեցու հենասյունը. նա թարգմանել է նաև ս. Բենեդիկտոսի վանական «Կանոնագրությունը», որը VI դարի կեսերին Իտալիայում՝ Մոնտե Կասսինոյում, գրել է արևմտյան անապատականության հիմքը:

XII—XIII դդ. հայ ուխտավորներն անշուշտ շատ ավելի մեծաթիվ են եղել, քան նախորդ շրջանում: Ամենից հաճախ դրանք, իհարկե, այն վանականներն էին, որ զալիս էին հայ թագավորների քաղաքական և դիվանագիտական հանձնարարությունները կատարելու և որոնք, օղորդվելով իրենց ուղևորությունից, որոշ ուխտագնացություններ էին կատարում:

XIII դարից սկսած Իտալիայում նույնիսկ հաստատվել են վասիլյան վանականների (որոնք Ս. Վասիլիի ուխտի հետևորդներն էին) կրոնական համայնքներ, որոնք ամբողջ Իտալիա-

¹²¹ Angèle Kapoian-Kouyoumjian. Le catholikos Grégoire II le Martyrophile (Vkayasêr) et ses pèlerinages. Venise—Saint Lazare, 1975, pp. 8—9.

¹²² Նույն տեղում, էջ 12—19:

¹²³ Նույն տեղում, էջ 19—20:

¹²⁴ Նույն տեղում, էջ 21—22:

¹²⁵ Հ. Գրեյն ճյառ. Մի պանդուխտ հայ արքեպիսկոպոսի դամբարան Բավարիայում. — «Լեյփցիգեր», 1981, էջ 46: «Munchner Merkur», 7—8 ապրիլ, 1979.

կան թերակզգում կառուցել են եկեղեցիներ, վանքեր, իջևանատներ. վերջիններս որպես հանդիման են ծառայել հայ ուխտավորների և վաճառականների համար:

Այս շրջանում ս. Դավեն Լուկկացու պաշտամունքը հայ ուխտավորների կողմից միանգամայն օրինալի բնույթ էր ստացել:

Սակայն չպետք է մոռանալ, որ առաջին առնչությունները, որոնք հող են սխալապատասխան հետապնդող խաչակրաց արշավանքների շրջանի փոխհարաբերությունների համար, իրականացվել են 1000-ական թթ. հայ ուխտավորների շնորհիվ, որոնք ամեն կերպ ձգտել են հարևանացնել իրենց ավանդած ժառանգությունը այլ ժողովուրդների հոգևոր արժեքներով և, նախապես, միաժամանակ իրենց ընդունող երկրները տանել սեփական մշակույթի գանձերը:

АРМЯНСКИЕ МОНАХИ И ПИЛИГРИМЫ В ЗАПАДНОЙ ЕВРОПЕ В КОНЦЕ X—НАЧАЛЕ XI ВЕКОВ

Жерар ДЕДЕЯН (Монпелье)

Р е з ю м е

Агиографическая традиция западной церкви приписывает некоторым святым, положившим начало церковной жизни в странах этого региона, армянское происхождение. Сношения выходцев из Армении, одной из первых стран, официально принявших новое вероисповедание, со странами Западной Европы заметно интенсифицировались после падения арабского владычества и возникновения царства анийских Багратидов. Об армянах—подвижниках монастырей Италии, Франции, Германии и других стран в X—XI вв. рассказывают их жития, содержащие немало достоверных сведений. Будучи представителями знатного сословия, монахи-армяне, согласно житиям, отказывались от наследства и подвизались в обителях разных стран; в Италии это отшельник Симеон де Полиронэ, Давен (Давид?), во Франции—пилигрим Яков, Грегуар де Питнвье, Макарий и Георгий (Жорнус), в Исландии—три епископа-армянина, и т. д. Говоря о причинах благосклонного отношения представителей римской церкви к пилигримам из Армении, следует учитывать то обстоятельство, что в лице армян западные церковнослужители искали союзников в борьбе с византийской церковью. Благодаря армянским монахам Запад лучше знакомился с Арменией и ее культурой, что в свою очередь способствовало интенсификации дальнейших сношений. В этом отношении следует особо выделить эпоху крестоносцев.